

«Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)», 12, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 142 էջ, 66 նկար:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչությունների շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարը, որի նպատակն է մասնագետների, նաև ընթերցող լայն շրջանների ուշադրությանը ներկայացնել ժողովրդագիտական նյութեր ու հետազոտություններ հայ ժողովրդի տարբեր պատմաազգագրական շրջանների ու գաղթախանների վերաբերյալ, ինչպես նաև՝ թեմատիկ-մեթոդական բնույթի ուսումնասիրություններ: Դրանով իսկ նորովի վերականգնվում են Ազգագրական հանդեսի ընդհատված ավանդույթները: Մատենաշարի առաջին պրակը լույս է տեսել 1970 թ., իսկ վերջինը՝ 12-ը, վերջերս:

Ներգալ պարկն ամփոփում է անվանի ժողովրդագետ-ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի «Լեոնային Ղարաբաղի հայերը» անտիպ ազգագրական ակնարկը և Լիլյա Վարդանյանի «Տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ (XIX դ. վերջ—XX դ. սկիզբ)» ռուսերեն ուսումնասիրությունը:

«Լեոնային Ղարաբաղի հայերը» ակնարկը գրված է հեղինակի 1920—1930-ական թվականների կեսերին հավաքած դաշտային-ազգագրական նյութի հիման վրա: Այս ժամանակաշրջանը բնորոշ էր նրանով, որ արցախահայոց կենցաղում ու աշխարհայացքում անցյալից եկած ավանդույթները տակավին հարատևում էին, իսկ նոր սովորությունները գտնվում էին կազմավորման, լինելության ընթացքի մեջ: Ստ. Լիսիցյանն անհետացող հնի մեջ կարողացել է տեսնել ազգագրական շրջանին բնորոշը և միաժամանակ կոհհիլել ու ուրվագծել մի շարք նոր երևույթների գոյատևման օրինակները: Այս առումով աշխատությունն ունի բացառիկ ճանաչողական արժեք, գիտական հետաքրքրություն և եզակի է իր ընդգրկման շրջանակներով:

«Լեոնային Ղարաբաղի հայերը» պատմաազգագրական աշխատության մեջ քննվում են երկրամասի բնակիչմայակալն պայմաններն ու աշխարհագրական միջավայրը, լեոնային ճյուղավորումների ու լեոնահովիտների խաղացած դերը բնաշխարհի վարչական բաժանման ու տնտեսության մեջ, բնակչության էթնիկական կազմն ու տեղաշարժերը, Շուշու հիմնադրման պատմությունն ու լեոնաշխարհի կյանքում նրա՝ իրեն քաղաքի, խաղացած դերը, պաշտամունքային-սովորույթային մի շարք երևույթներ, նյութական ու հոգեոր մշակույթի հարցեր: Հնի հետ մեկտեղ քննվում են նոր, հրատապ լուծում պահանջող խնդիրներ՝ կապված երիտասարդ սովետական իշխանության միջոցառումների կենսագործման հետ:

Ստ. Լիսիցյանն ակնարկի սահմաններում անդրադառնում է պատմաազգագրական շրջանի անցյալին: Խոսելով Շուշի քաղաքի ու բերդի հիմնադրման մասին, նա ևս հավաստում է, որ այն իրեն բնակավայր գոյություն է ունեցել շիվանշիրցի Փանահ-խանի կողմից Շուշի բերդը կառուցվելուց (1752) շատ առաջ, և որ բնակավայրի գոյությունը պայմանավորված է եղել Արցախի հարավային լեոնագոտիներն այցելող խաշնարածների հետ կատարվող ապրանքափոխանակությամբ (որպիսի դեր, ինչպես մատնանշում է հեղինակը, կատարել է նաև Վանք գյուղը՝ Խաչնում) և ապա Թավրիզ—Շամախի ամենակարճ առևտրական ճանապարհի առկայությամբ: Ավելացնենք, որ Շուշին եղել է ռազմական ճամբար՝ սղնախ, ուր զորավարժություններ էր կատարում Վարանդայի հայոց զորքը:

Բնակչության էթնիկական կազմի վերաբերյալ իր դիտարկումները շարդրելիս հեղինակը հատուկ կանգ է առնում այն հանգամանքի վրա, որ տվյալ պատմաազգագրական շրջանի հիմնական բնակիչները եղել են հայերը, որոնք տեղաշարժերի գրեթե չեն ենթարկվել (էջ 16), պարսկահայ գաղթականությունը միաձուլվել է բնիկների հետ և նրանց վրա ազդեցություն գրեթե չի գործել: Բնակչության լայն ծավալ ստացած արտահոսքը Ստ. Լիսիցյանը պատճառաբանում է երկրամասի սակավահողությամբ: Լեոնային Ղարաբաղի բնակչությունը 1924 թ. կազմել է 130 հազ. մարդ, ըստ որում հայերը՝ 120 հազ., իսկ ադրբեջանցիները՝ 10 հազ. (էջ 17):

¹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 151:

Ժողովրդական հավատալիքների համակարգում Ստ. Լիսիցյանն առանձին-առանձին քննում է ժողովրդական տոները, հասարակական ու ընտանեկան կենցաղին բնորոշ երևույթները, պաշտամունքի վայրերն ու ձևերը: Ըստ այդմ, պաշտամունքի համակարգում նա տարբերակում է քրիստոնեական ու նախաքրիստոնեական շերտերը և իրավացիորեն գտնում, որ արքայաշահայոց կյանքում ավելի կայուն ու կենսունակ է նախաքրիստոնեական շերտը: Այս կապակցությամբ նա վկայակոչում է մի շարք ավանդույթներն ու հավատալիքներ՝ կապված բուսական ու կենդանական աշխարհի, բնության առանձին երևույթների հետ (ամպրոպ, կայծակ, ծառեր, բարախրեր, բարեր, աղբյուրներ, արշ, ճեղքեր ու այլն): Նա հատուկ ուշադրություն է դարձնում այն պաշտամունքային վայրերի բազմաթանակությանը, որոնց անվանումները չեն առնչվում քրիստոնեական սրբերին, առանձնացնում է կանացի անունով հայտնի քրիստոնեական պաշտամունքային կառույցները, որոնց թիվը հասնում է 59-ի (104-ից) և իրավացիորեն այդ երևույթը փորձում է կապել Մեծ Մոր երկրպագության վերապրուկների հետ (էջ 53): Երգելի և ժողովրդական բանասրվեստի հարցերին անդրադառնալիս Ստ. Լիսիցյանը գտնում է, որ արքայախայրերը չունեն երգեր ու պարեր, մի կարծիք, որ մերժվում է վերջին տարիների հրատարակություններով²¹:

«Եռնային Ղարաբաղի հայերի» բնագիրը հրատարակության է պատրաստել պատմական գիտությունների թեկնածու Լ. Վարդանյանը։ Այն, գրված լինելով 1930-ական թվականներին, կրկն է ժամանակի տիրող մտայնության կնիքը։ Պատմական գիտությունների թեկնածու Դ. Վարդույանը, խմբագրելով աշխատությունը, այն լրացրել է գիտական արդի փուլին հայալի որոշ տվյալներով՝ տողատակով ներկայացնելով անհրաժեշտ ծանոթագրություններ։ Սակայն, մեր կարծիքով, որոշ հարցեր դարձյալ մնացել են չպարզաբանված։ Ինչպես, օրինակ՝ Շամբերի 1918 թ. և Շուշու 1920 թ. հրդեհի հետ կապված անցքերը (էջ 26)։ Կան որոշ անճշտություններ. օրինակ՝ Բաֆֆու «համայնի մեծությունները» գրքեր չէր կարող լույս տեսնել 1822 թ. (էջ 19)։ հավանաբար խոսքը 1882 թ. հրատարակության մասին է։ Կամ՝ ռուս պատմաբան Վ. Պոտտոյի «Ղարաբաղի առաջին կամավորները» աշխատությունը տպագրվել է 1902 թ. և ոչ թե 1922 թ.։ Խմբագրի մի ծանոթագրության հետ ևս չի կարելի համաձայնել։ Նա գրում է, թե Շահնազարը Զիվանշիրի ավազներից մեկն էր, որ դաշինք կնքեց Փանահ-խանի հետ (էջ 14)։ Խոսքն այստեղ Վարանդայի Շահնազարյան մեծիքական տան ներկայացուցիչ Շահնազարի մասին է, որը սպանելով եղբորը, տիրացավ մեծիքական իշխանությանը, այսպես, համայնի մնացած մեծիքներից պաշտպանվելու նպատակով, միացավ չղվանշիրցի ավազականացեալ Փանահին և համայնի մեծիքների դաշնակցության ջլատման պատճառ դարձավ։

Քննիչող աշխատության պատմաճանաչողական արժեքի բարձրացմանը նպաստում են երկրամասի քարտեզը, գունավոր, սև-սպիտակ լուսանկարները, լափագործությունները, որոնք ներկայացնում են արցախահայոց նշանավոր վանքերը (Գանձասար, Ամարաս, ս. Սիդշե, Գտիլի), բնակավայրերը (Շուշի, Զաքարտա, Սոս, Հաղորոթ), հասարակական ու պաշտոնական-քաղաքային այլ կառույցներ, շիրմաքարեր, գորգեր, կարպատներ, գոտիներ, գործիքներ և այլն:

12-րդ պարակի մյուս հետազոտությունը նվիրված է հայ ժողովրդի կյանքում վաղ անցյալում նշանակալից դեր խաղացած նվիրատվական ծեսի վերապրկներին: Աղետառության համար հիմք են ծառայել պատմական Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններից XIX դ. վերջին և XX դ. սկզբին գրի առնված ժողովրդագիտական, ինչպես նաև հեղինակի՝ վերջին տասնամյակներում գրի առած դաշտային ազգագրական նյութերը, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

1. Վարդանյանը, ի մի բերելով ժողովրդագրության նյութը, հանգում է ուշագրավ հետեւյնից հետեւին. յուրաքանչյուր առանձին դպրում երեւութները դիտում է պատմական զարգացման ընթացքի մեջ, կանգ առնում ազգագրական շրջանների յուրահատկությունների վրա: Իր եզրակացությունները փաստարկում է գրական, պատմական, լեզվաբանական, բանահյուսական աղբյուրներից քաղած տվյալներով: Քանի որ նվիրատվական ծեսի վերապրուկների հետազոտությունը չի կարելի տանել սոսկ հայկական նյութի շրջանակներում հեղինակը դիմել է հարանե ու լիճիչասիրական, հատկապես Խորեզմի ուղեկներին վերաբերող համեմատական նյութերին, նաև վերոհիշյալների հետ հայկական նյութի մի շարք ընդհանուրությունների

2 4. Դ ա Վ Բ յ ա ն, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, «Լեոնային Ղարաբաղի բանաձևաբանությունը», Երևան, 1971, «Նմանություններ Լեոնային Ղարաբաղի բանաձևաբանությանը», Երևան, 1978:

առկայությունը: Հետազոտության մեջ հաստատվում է այն տեսակետը, որ նվիրատվական ծեսն իբրև հասարակական երևույթ գոյություն է ունեցել նաև հին հայոց մեջ, և ծեսի որոշ վերապրուկներ, հաճախ վերափոխված, իմաստազրկված հասել են մեր օրերը: Այդ տեսանկյունից և. Վարդանյանը քննում է հարսանեկան որոշ արարողություններ, ինչպիսիք են, օրինակ՝ փեսաթրաշը, հարս ու փեսա հագնեցնելը, քավորի, ազաբ-մակարների գործուն մասնակցությունը հարսանեկան ծեսին և այլն:

Հայտնի է, որ նվիրատվական ծեսի նպատակն է եղել պատրաստել, դաստիարակել տոհմի լիիրավ, ֆիզիկապես կոփված և ավանդույթների քաջատեղյակ անդամներ: Լ. Վարդանյանը մի շարք փաստերով հաստատում է այդ միտքը: Բնորոշն այս առումով Հայոց-Ձորի երիտասարդների միությունն հետ աղերսվող նյութերն են (էջ 107), որոնք յույս են սփռում միությունների ռազմապաշտպանողական գործունեության վրա: Թվում է, թե պետք է օգտագործվեն նաև Արցախի ու Սյունիքի սղնախների մասին գոյություն ունեցող տվյալները: Սղնախների իբրև ռազմավարական կայանների, գոյության փաստը մտածել է տալիս, որ դրանք ևս իրենց ծագումով առնչվում են նվիրատվական ծեսին: Խոսելով երիտասարդների ռազմական, ֆիզիկական դաստիարակության մասին, հեղինակը մի շարք փաստերի հետ միասին վկայակոչում է ննչեցյալին ձիու, ձիավարությունների ուղեկցությամբ թաղելու սովորույթը (էջ 114): Այս հարցում դժվար է համաձայնել հեղինակի հետ: Հասարակական դարգացման որոշ փուլում ուղեկցող ձին, ինչպես նաև ձիու թաղումը տիրոջ հետ, որը հայտնի է բազմաթիվ հնագիտական նյութերից, ավելի շուտ առնչվել է հողու, հանդերձյալ աշխարհի գոյության հավատքին, ուր ձին հանդես է եկել իբրև հողին մեռյալների աշխարհը տեղափոխելու փոխարդամիջոց: Նվիրատվական ծեսի վերապրուկների շարքում մեծ տեղ են զբաղում մահերը կտրելու հետ կապվող սովորույթները, որոնց հանգամանորեն անդրադառնում է Լ. Վարդանյանը: Հեղինակի փաստերը կարելի է լրացնել արցախահայոց մեջ կենցաղավարող մեզ թաղելու հետաքրքիր սովորությամբ, որը խորհրդանշում է սղամարդկանց եղբայրանալը: Ըստ որում, այդ եղբայրությունը համարվել է ավելի ամուր, քան արնակցականը:

Հետազոտության մեջ քննվել են մի շարք տերմիններ, սահմանվել են դրանց գործածության ազգագրական շրջանակներն ու նշանակությունները: Հստակվել են ալեոր, չոշ, մանուկ, երիտասարդ, պարմանի, օդա, սաքու, նստարան, մակար, ազաբ և այլ բառերի իմաստները՝ ըստ լեզվաբանական գրականության (հայ և օտար) և հետազոտության առարկայի հետ աղերսվող ազգագրական նյութերի: Հետաքրքիր է ազաբ բառի բացատրությունը, որը հեղինակը բխեցնում է թուրքերեն նույնանիշ պատիժ, լարչարանք բառից (էջ 111): Սակայն փաստարկված եղբայրությունների շարքում մեզ համոզիչ ու տեղին չի թվում մանուկ բառի կապակցությամբ Մ. Էմինի՝ Մ. Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունից բերված հատվածը (էջ 116): 2. Անառյանը տալիս է բառի զինվոր, պատանի իմաստները, իսկ Սո. Մալխասյանը մանուկը աշխարհաբար է թարգմանել կտրիճ բառով, որ լիովին համահունչ է այդ բառի ժողովրդական առումին:

Նշենք, որ գրախոսվող աշխատությունն ունի նվիրատվական ծեսի հետ առնչվող առանձին արարողությունների և տղամարդկանց հասակային տարբեր խմբերի տարազը պատկերող նկարներ, մեծահասակ տղամարդկանց հավաքատեղիների՝ օդաների շափագրությունները, որոնցից աշխատությունը մեծապես շահում է:

Լ. Վարդանյանը ուսումնասիրության ներածության մեջ ներկայացրել է օգտագործված գրականության ցանկ, քննադատական վերաբերմունք ցուցաբերել առանձին գրքերի նկատմամբ: Ասենք, որ հեղինակը ընդգրկել է հայերեն, ռուսերեն և օտարալեզու բոլոր հիմնական աղբյուրները: Բայց նրա ուշադրությունից վրիպել է Բ. Հ. Գևորգյանի հոդվածը, որն անմիջականորեն առնչվում է տվյալ հետազոտության առարկային:

«Տղամարդկանց տարիքային խմբերի ավանդույթները հայերի մեջ (XIX դ. վերջ—XX դ. սկիզբ)» աշխատությունն առաջին ամբողջական հետազոտությունն է նվիրատվական ծեսի վերաբերյալ հայ ժողովրդագիտության ասպարեզում և ունի անուրանալի գիտական արժեք:

ԱՆՎԱՐԻ ՂԱԶԻՅԱՆ

Բաժնեթերակա գիտությունների բեկեմուն

3 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 255:

4 Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 98:

5 Բ. Հ. Գևորգյան, Հայկական հարսանեկան մի ծիսակատարության մասին (ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», 1967, № 5, էջ 87—92):